

ՎԵՐԱՍՈՒՏ
ՀԱԼԻՎՈՒՏԻ ԹՄՄ ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ուրախ ենք յայտնելու, թե Հալիվուտի ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանը հոգեւոր հովանաւորութիւնը կը վայելէ Արեւմտեան Թեմի Առաջնորդարանին: Սրբազան Հայրը զանազան առիթներով կ'այցելէ վարժարանը եւ հանդիպում կ'ունենայ Տնօրէնին եւ Հոգաբարձութեան հետ:

Գոհութիւն Քարձրեալն Աստուծոյ, որ կրթութեան եւ դաստիարակութեան այս հաստատութեան 30րդ կրթաշրջանն է որ կը սկսի այս տարի:

2010-2011 կրթաշրջանի բացումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 1ի առաւօտեան ժամը 8:15ին: Բացման արարողութեան Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայացուց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, որ բացման եւ փակման աղօթքը կատարեց: Ներկայ էր նաեւ Հալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեանը, որ վարժարանին Հոգեւոր Հովիւն է եւ կը հոգայ ուսանողներուն հոգեւոր կարիքները եւ մասնաւոր առիթներով Սուրբ Հաղորդութիւն կը մատակարարէ անոնց: